

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2001թ. հունվարին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1431.1 հազ. մարդ, որոնց 89.3% կամ 1278.5 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 10.7% կամ 152.6 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 35.2% կամ 450.2 հազարի վերաբերյալ տեղեկությունը ստացվում է մոտ 9 հազար սուբյեկտներից ամսական պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: 2001թ. հունվարին նշված սուբյեկտներում զբաղված բնակչության թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 8.1%: Այս սուբյեկտներում զբաղված բնակչության 45.5% զբաղված է եղել սոցիալական ոլորտում (առողջապահություն և սոցիալական ապահովություն, կրթություն, մշակույթ, արվեստ), 26.3%՝ արդյունաբերության մեջ, 6.5%՝ տրանսպորտի և կապի համակարգում, 4.5%՝ շինարարության մեջ, 3.2%՝ բնակարանային կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում, 6.0%՝ կառավարման համակարգում և 8.0%՝ այլ ճյուղերում:

2001թ. հունվարի վերջին ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման կանգնած են եղել 177.2 հազար աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.2% կամ 175.7 հազարը չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 86.9% կամ 152.6 հազ. մարդ:

2001թ. հունվարին վերը նշված ծառայության կողմից հաշվառման են վերցվել 2.2 հազ. մարդ, որոնցից 1.8 հազարը կամ 81.8% ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 3.7 հազ. մարդ, որոնցից՝ 18.9%՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի, 2001թ. հունվարին*

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը		Նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա հունվարի նկատմամբ	ընդամենը հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա հունվարի նկատմամբ
Ընդամենը	177.2	87.2	152.6	86.8
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	2.3	74.2	1.6	72.7
Արարատ	8.4	85.7	6.8	90.7
Արմավիր	12.2	78.7	9.5	76.0
Գեղարքունիք	10.8	88.5	7.7	86.5
Լոռի	24.3	85.0	21.1	81.5
Կոտայք	14.9	80.1	11.6	78.9
Շիրակ	33.2	93.8	29.4	91.6
Սյունիք	15.7	101.3	13.6	98.6
Վայոց Ձոր	2.1	87.5	1.8	90.0
Տավուշ	5.3	84.1	4.7	87.0
Երևան	48.0	86.2	44.8	88.2

*) ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով

Գործազուրկ բնակչության 95.0% կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում, նրանցից՝ 29.4 %՝ Երևան, 17.6 %՝ Գյումրի և 8.3 %՝ Վանաձոր քաղաքներում:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 64.7%: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում նախորդ տարվա հունվարի նկատմամբ աճել է 0.6 տոկոսային կետով:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2001թ. հունվարին կազմել է 561 մարդ. այդ թվում՝ 69.9 % կամ 392-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով:

2001թ. հունվարին աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 708 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը մեկ տեղի հաշվով կազմել է 250 մարդ (աշխատանք փնտրող):

Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2001թ. հունվարին կազմել է 9.6 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3364 դրամ:

Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2001թ. հունվարին կազմել է 10.7% և նախորդ ամսվա համեմատությամբ նվազել է 0.2, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 1.3 տոկոսային կետով: